ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1961 Общественные науки

Վ. Ե. Ղազախեցյան

ՍՈՎԽՈԶԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1921—1930 ԹԹ.

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը սոցիալիզմի կառուցման դժվարագույն պրոբլեմներից մեկն է։ Այդ վերափոխումը նախապատրաստելու և իրականացնելու գործում մեծ գեր են խաղացել գյուղատնտեսական պետական խոշոր տնտեսությունները՝ սովխոզները։ Վ. Ի. Լենինը և Կոմունիստական պարտիան բարձր էին գնահատում սովխոզների նշանակությունը՝ նրանց դիտելով որպես օրինակելի սոցիալիստական ձեռնարկություններ։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից և կալվածատիրական հողերը բռնագրավելուց հետո այդ տարածությունների վրա առաջին հերթին պետք է կազմակերպել խոշոր սովետական տնտեսություններ։ Այդ կալվածները, որտեղ կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության ժամանակ «բանվորներից արյուն ու քրտինք էին քամում», պետք է դարձնել «բնկերական տնտեսության նմուշներ»[1]։ Վ. Ի. Լենինը կարևոր ուշադրություն էր դարձնում հատկապես այն բանի վրա, որ սովխոզները սերտ կապ պահպանեն շրջապատի գյուղացիական տնտեսությունների հետ, օգնություն ցույց տան նրանց և ապացուցեն խոշոր, սոցիալիստական տնտեսությունների առավելությունները և գերազանցությունը անհատական գյուղացիական տնտեսությունների նկատմամբ։ Հենց դա նկատի ուներ Լենինը, երբ Դեկտեմբերի 8-ին կոնֆերենցիայում պաշտպանում էր այն միտքը, թե պետք է հասնել նրան, որ սովխոզները և կոմունաները «անմիջապես իրական օգնություն ցույց տան շրջակայքի գյուղացիներին»[2]։

Մեր նպատակն է այս հոդվածում տալ Հայաստանի սովխոզային շինարարության համառոտ պատմությունը և սովխոզների կողմից անհատական գյուղացիական տնտեսություններին ցույց տված օգնությունը՝ մինչև գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացմանն անցնելը։

* * *

Սովետական իշխանության հաղթանակի հետևանքով Հայաստանում պետականացվեց 1.5 միլիոն հեկտար հող. այդ թվում բռնագրավվեց 200 հազար հեկտար արքունական, վանքապատկան և կալվածատիրական հողեր։ Բռնագրավված հողերի մեծ մասը հանձնվեց հողի աշխատավորներին՝ հողազուրկ և սակավահող գյուղացիական տնտեսություններին և միայն մոտ 10 հազար հեկտար կալվածատիրական հող հատկացվեց սովետական տնտեսություններին։

Նախկին կալվածքները, որոնք նրանց տերերի ձեռքին միջոց էին աշխա-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 29, էջ 30—31 (4-րդ հրատ.)։
[2] Նույն տեղում, հատ. 30, էջ 227։

տավորներին շահագործելու, ցոփ ու շռայլ կյանք վարելու համար, Սովետական իշխանություններ դարձրեց համաժողովրդական սեփականություն և ծառայեցրեց սոցիալիզմի կառուցման, բանվորների և գյուղացիների դրությունը բարելավելու նպատակին։

Հայաստանում սովխոզների կազմակերպումը սկսվեց սովետական կարգերի հաղթանակից անմիջապես հետո։ Դաշնակցականների ավանտյուրայի ջախջախումից հետո, 1921 թ. ապրիլի 12-ին Սովետական Հայաստանի Ռևկոմի նախագահ Ս. Կասյանը հաստատեց «Հայաստանի ԽՍՀ սոցիալիստական հողաշինարարության և սոցիալիստական հողագործությանն անցնելու միջոցառումների կանոնադրությունը», որի 4-րդ հոդվածում նշված է, որ սովխոզները, աշխատանքային արտելները և հողի ընկերական մշակման մյուս ձևերը սոցիալիզմին անցնելու լավագույն միջոցներն են։ Կանոնադրության մեջ միաժամանակ ցույց է տրված սովխոզների կազմակերպման նպատակն ու խնդիրները, նրանց գործունեության հիմունքները և այլն։

1921 թ. կեսերին կազմակերպվեցին ռեսպուբլիկայի առաջին չորս սովխոզները՝ սոցիալիստական գյուղատնտեսության առաջնեկները։ Դրանք էին՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ սովետական տնտեսությունները։ Հայաստանի առաջին սովխոզները կազմակերպվեցին նախկին կալվածատիրական հողերի վրա։

Առաջին սովխոզի համար օգտագործվեց Հրազդանի ափին ընկած Սարդարի խաղողի այգին և մի քանի այլ ազգայնացված այգիներ՝ 38 դեսյատին տարածությամբ։ Երկրորդ սովետական տնտեսությունը կազմակերպվեց Կոտայքում՝ Մեղրի գյուղի մոտ, Աղամալյանների նախկին կալվածքում, 110 դեսյատին հողատարածությամբ։ Երրորդ սովխոզը գտնվում էր Երևան—Էջմիածին ճանապարհին՝ Փարաքար և Վարմազիար գյուղերի միջև, Ավարեկյանների նախկին կալվածքում, և ուներ ավելի քան 500 դեսյատին տարածություն։ Այս սովխոզը այն ժամանակ ամենախոշորն էր։ Չորրորդ սովխոզը կազմակերպվեց Ախթալայում և գոյություն ունեցավ ընդամենը հինգ տարի (1926 թ. լիկվիդացվեց և նրա փոխարեն կազմակերպվեց Հանդստյան տուն)։

Նախկին կալվածքներից Սովետական իշխանությանը, եթե կարելի է ասել, ժառանգություն էր մնացել միայն ծայրահեղ քայքայված տնտեսությունն և խիստ ուժասպառ եղած հողերը։ Բացի այդ, հիշյալ կալվածքները իրենց կուլտուրայով շատ քիչ էին տարբերվում շրջակայքի գյուղացիական տնտեսություններից։ Հայկական ԽՍՀ Հողժողկոմատի զեկուցման մեջ այդ տնտեսությունների դրության մասին ասված է. «Հայաստանի խորհրդայնացումից հետո Հողժողկոմատի տրամադրության տակ անցան 5—6 փոքր տնտեսություններ, որոնց կուլտուրական մակարդակը ոչնչով չէր տարբերվում իրենց շրջապատի գյուղացիական տնտեսություններից։ Թե ցարական, թե դաշնակցական կառավարություններից Հայաստանի խորհրդային իշխանությունը չէր անցել և ոչ մի պետական չեն կուլտուրական տնտեսություն։ Չնայած այս անմխիթար ժառանգությանը, Հողժողկոմատը, ինչ գնով էլ լիներ, գյուղատնտեսության բարձրացման կենտրոններ պիտի ստեղծեր, որի համար նա իր ձեռքն առավ գոյություն ունեցող մի քանի տնտեսությունները և համառ աշխատանքով սկսեց նրանց կարգավորել»։

---

[1] ՏԵՍ ՀՍՍՌ ՀՌՍՇ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 9, թ. 19—30։

[2] Նույն տեղում, ֆ. 113, ց. 2, գ. 1211, թ. 63։

Բացի հիշյալ սովխոզներից, Սովետական իշխանության առաջին տարիներին կազմակերպվեցին նաև մի քանի այլ պետական տնտեսություններ, որոնց մեջ իր նշանակությամբ հիշատակության արժանի է Լոռու պետական անասնաբուծարանը (1922 թ.)։

Հիշյալ բոլոր սովխոզները պատկանում էին Հողժողկոմատին, որոնց ղեկավարությունը բարելավելու համար 1924 թ. Հողժողկոմատում կազմակերպվեց գյուղատնտեսական տրեստը։

Հողժողկոմատը սկզբնական շրջանում զբաղված էր այն բանով, որ վերականգնի ավերված տնտեսությունները, բանվորների աշխատանքի համար ստեղծի որոշ նորմալ պայմաններ։ Սովետական իշխանությունը այդ ժամանակ հնարավորություն ուներ միայն կարճատև վարկերով օգնելու սովխոզներին՝ նրանց խիստ անհրաժեշտ կարիքները հոգալու համար։

Կարճ ժամանակամիջոցում սովխոզներում կառուցվեցին մի քանի բանվորական տներ, վերականգնվեցին ավերված շինությունները, կառուցվեցին դոմեր և արտադրական նշանակություն ունեցող այլ օբյեկտներ։ Երբորդ սովխոզում գործարկվեցին բրինձ մաքրող և բամբակազտիչ գործարաններ, որոնք աշխատեցին մինչև 1925 թ.։ Չեռք բերվեցին մի քանի տրակտոր, կենդանի քաշող ուժ և այլն։ Բարելավվեց այգիների դրությունը, տնկվեցին խաղողի և պտղատու նոր այգիներ։ 1925 թ. 1-ին և 3-րդ սովխոզներում հիմնադրվեցին Ղրիմից բերված խաղողի մուսկատ սորտի այգիներ, որը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանում խաղողի այդ նոր, արժեքավոր տեսակների տարածման և զարգացման գործում։

Այգեգործական առաջին սովխոզը ուներ փորձնական-ցուցադրական նշանակություն։ Այնտեղ ուսումնասիրում էին խաղողի այգու տնկման նոր եղանակները, ֆիլոքսերայի հայտնաբերման և նրա դեմ պայքարելու միջոցները և այլ հարցեր։ Գյուղացիական տնտեսություններին մատեր և տունկեր մատակարարելու համար սովխոզը ստեղծեց խաղողի և պտղատու ծառերի տնկարաններ։ Հետազոտական աշխատանքները գիտական հիմքերի վրա դնելու և ընդլայնելու համար այստեղ 1927 թ. բացվեց Այգեգործական կայանը, որն ուներ խաղողագործական, պտղաբուծական, քիմիական և այլ բաժիններ։

Կայանի (այժմ Այգեգործության, խաղողագործության և գինեգործության ինստիտուտ) կազմակերպումը մեծ իրադարձություն էր Հայաստանի գյուղատնտեսական գիտության կյանքում, որը փաստորեն դեռևս գոյություն չուներ և նոր էր սաղմնավորվում։ Նրա աշխատանքները ղեկավարում էր անվանի այգեգործ Գ. Գրձելյանը։

Այգեգործական կայանին կից գործում էր Բույսերի պաշտպանության բաժինը, որն օգնում էր գյուղացիական տնտեսություններին՝ գյուղատնտեսական հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարելու համար։

Երկրորդ սովխոզը, որը 1924 թ. կոչվեց Մյասնիկյանի անունով, որոշակի արտադրական ուղղություն չուներ։ Այստեղ մշակվում էին դաշտային կուլտուրաներ, փորձեր էին կատարվում ծխախոտի մշակության և այն Կոտայքի գյուղերում տարածելու ուղղությամբ։ Ստեղծվեց նաև խոզաբուծական տնտեսություն՝ խոզերի ցեղական տեսակների զարգացման և տարածման նպատակով։

Երրորդ սովխոզում զբաղվում էին ինչպես դաշտավարությամբ, մասնավորապես բամբակագործությամբ, այնպես էլ այգեգործությամբ։ 1924—1925 թթ. Հողժողկոմատը որոշեց այս տնտեսությունը զարգացնել խաղողագործության գծով։ Այդ ուղղությամբ էլ սովխոզը աստիճանաբար սկսեց վերակառուցվել։ Այնտեղ միաժամանակ փորձեր էին կատարվում շերամապահության, խորդենու մշակության և այլ ուղղությամբ, որը, սակայն, լայն մասշտաբներ չուներ։

Լոռու պետական անասնաբուծարանը սկզբից ևեթ ուներ որոշակի ուղղություն։ Նրա խնդիրն էր անասունների ցեղական տեսակների բուծումը՝ ռեսպուբլիկայի կովերի հոտը որակական տեսակետից բարելավելու նպատակով։

Առաջին մի քանի տարիների ընթացքում սովխոզները դեռևս ի վիճակի չէին կազմակերպելու տնտեսական-արտադրական լայն գործունեություն և գյուղացիական տնտեսություններին ցույց տալ ագրոնոմիական ու այլ կարգի մեծ օգնություն։ Դրա համար անհրաժեշտ էր, որ նրանք ունենային լավ կազմակերպված և կուլտուրապես վարվող տնտեսություն, որակյալ կադրեր, գյուղատնտեսական տեխնիկա, համապատասխան շինություններ և այլն։ Սակայն ժողովրդական տնտեսության վերականգնման հաջողություններն արդեն հնարավորություն էին տալիս ուժեղացնելու սովխոզները։ Պարտիան և կառավարությունը ձեռնամուխ եղան սովխոզների նյութա-տնտեսական և կազմակերպական ամրապնդման գործին։

1925 թ. փետրվարին ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն որոշում ընդունեց սովխոզների մասին։ Ինչպես ասված է այդ որոշման մեջ, սովխոզների շինարարության և ամրապնդման ընթացքում պարտիայի առաջ ծառացած հիմնական խնդիրները հանգում են այն բանին, որ սովխոզը կուլտուրական տնտեսավարման պրակտիկ օրինակ ծառայի և իր ամենորյա աշխատանքով կապված լինի շրջակա գյուղացիության հետ, նրան օգնի սերմերով, ցեղական անասուններով, տեխնիկայով և գյուղացիներին սովորեցնի հողագործության բարելավված ձևեր։ Նշելով սովխոզների աշխատանքում տեղ գտած թերությունները, պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ցույց էր տալիս դրանք վերացնելու և սովխոզների գործունեությունը բարելավելու ուղիներն ու միջոցները։ Հատկապես ուշադրություն էր դարձվում սովխոզների ֆինանսական օգնության վրա[5]։ Պարտիայի այդ որոշումը շրջադարձային կետ հանդիսացավ սովխոզների հետագա զարգացման կյանքում։

Սովետական Միության Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի որոշմամբ 1925 թ. անցկացվեց տրեստների սովխոզների հետազոտություն։ Նույն թվականի հուլիսի 9-ին Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը լսեց Բանվորա-գյուղացիական տեսչության Ժողովրդական Կոմիսարիատի զեկուցումը տրեստների սովխոզների հետազոտության արդյունքների և Պետպլանի զեկուցումը՝ երկրի սովխոզների տնտեսական դրությունը ամրապնդելու միջոցառումների վերաբերյալ և ընդունեց համապատասխան որոշում։ Իսկ մինչ այդ (մարտի 16-ին) արդեն որոշում էր ընդունվել սովխոզներին մի քանի միլիոն ռուբլի վարկ և մի շարք այլ արտոնություններ տալու մասին[6]։

Ելնելով հիշյալ որոշումներից, ՀՍԽՀ Ժողկոմխորհի Տնտեսական խորհրդակցությունը 1926 թ. փետրվարի 17-ին լսեց Ար. Երզնկյանի զեկուցումը

[5] Տե՛ս „Известия ЦК РКП(б)", № 11—12, 1925.
[6] ՀՍՍՌ ՀԱՄՀ. ՊԿՊԱ. ֆ. 113, ց. 2, գ. 1244. թ. 4, 10։

սովխոզների ամրապնդման համար Հողժողկոմատի ձեռնարկած միջոցառումների մասին։ Տնտեսական խորհրդակցությունը որոշեց, որ անհրաժեշտ է ամենից առաջ զարգացնել անասնարուծարանները, ցուլանոցները, սերմազտիչ կայանները, տնկարանները, փորձնական պտղաբուծական գործը, ավելացնել երկարատև վարկերի գումարը և այլն[7]։

Պարտիայի և կառավարության ձեռնարկած միջոցառումները օգնեցին վերացնելու թերությունները և նպաստեցին սովխոզների հետագա զարգացմանը։

1925 թ. սկսած սովխոզները վարկեր էին ստանում պլանավորված ձևով, իսկ 1927 թվականից դրանք դարձան նպատակային և երկարատև։

Այդ տարիներին առաջին քայլերը կատարվեցին սովխոզների կողմից գյուղացիական տնտեսություններին օգնություն ցույց տալու բնագավառում։ Չնայած օգնությունը դեռևս մեծ չէր, սակայն այդ շրջանում այն ուներ կարևոր նշանակություն։

Այսպես, առաջին սովխոզը միայն 1926 թ. գյուղացիական տնտեսություններին բաց է թողել խաղողի 14 հազար ընտիր մատ, պտղատու ծառերի 15 հազար տնկի և այլն։ Սովխոզի սրսկիչ ապարատները անվճար կերպով օգտագործվում էին շրջակա տնտեսությունների կողմից՝ խաղողի հիվանդությունների դեմ պայքարելու համար։ Հիվանդությունների բուժման նման մեթոդը հազվագյուտ երևույթ էր այն ժամանակ։

Մյասնիկյանի անվան երկրորդ սովխոզը երեք տարվա ընթացքում (1924—1926 թթ.) գյուղացիներին բաժանեց 11 միլիոն ծխախոտի սածիլ, ցուցմունքներ տալով նրա մշակության վերաբերյալ։ Սովխոզի ագրոնոմները գյուղացիների հետ ունեցել են 25 զրույց՝ գյուղատնտեսական զանազան հարցերի վերաբերյալ։ Առաջավոր ցանքաշրջանառության կիրառման շնորհիվ սովխոզում ստացվում էր հացահատիկի համեմատաբար բարձր բերք։ «Այն ժամանակ, երբ Կոտայքի շրջանի գյուղացիները իրենց դաշտերի մեկ դեսյատինից ստանում էին 50—60 փութ ցորեն, սովխոզը ստանում էր 100—150 փութ և այդ բոլորը Կոտայքի գյուղացի-բանվորների աչքի առաջ, որոնք տասնյակներով աշխատում են սովխոզում»—կարդում ենք Հողժողկոմատի Գյուղտրեստի 1926 թ. հաշվետվության մեջ։ Այնտեղ, այնուհետև, ասված է՝ «Այգեգործության նկատմամբ այն հսկայական հետաքրքրությունը, որ նկատվում է Կոտայքի գյուղացիության մեջ, հանդիսանում է սովխոզի նվաճումը»։

Բացի այդ, հիշյալ սովխոզը տեղական ցեղը բարելավելու համար Դիլիջանի և Նոր Բայազետի գավառներին տվեց մոտ հարյուր գլուխ «Յորքշիր» ցեղի խոզեր և այլն[8]։

Էջմիածնի գավառի Վարմազիար, Փարաքար և մյուս գյուղերին բազմակողմանի օգնություն էր ցույց տալիս 3-րդ սովխոզը։ Դեռևս 1924 թ. հոկտեմբերին սովխոզի դիրեկցիան Գյուղտրեստին հայտնում էր, որ տնտեսությունը բարեկամական հարաբերությունների մեջ է շրջակա գյուղերի հետ, գյուղացիներին օժանդակում է սերմերով և գյուղատնտեսական մեքենաներով (գութան, սրսկիչ ապարատներ և այլն)։ Սովխոզում կազմակերպվել է նաև տար-

[7] Նույն տեղում, թ. 36։
[8] ՏԵ՛ս ՀՍՍՌ ՀՌՍՇ ԳԿԳԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1017, թ. 16—18։

բեր կուլտուրաների ցուցադրական դաշտ, դեպի որը մեծ հետաքրքրություն է առաջացել գյուղացիների մեջ[9]։

Սովխոզի մասնագետները դաշտավարության և խաղողագործության հարցերի վերաբերյալ շրջակա գյուղերում զրույցներ էին անցկացնում։ Փարաքար գյուղում սովխոզի կալսիչը 1926 թ. կալսեց 5.200 փութ հացահատիկ։ Գյուղացիներին էր տրամադրված նաև սովխոզի սերմացուցիչը։ Այն բանի շնորհիվ, որ Հայաստանում առաջինը այստեղ հիմնադրվեց խաղողի Մուսկատ և այլ սորտերի այգի, բազմաթիվ գյուղացիներ մեծ հետաքրքրություն էին ցույց տալիս դեպի այդ լավագույն տեսակները։

Լոռու 1-ին պետական անասնաբուծարանը, որը ձեռք էր բերել մի քանի տասնյակ ցեղական անասուններ («Սիմենտալ» և «Ճվից» կովեր և ցուլեր), 1926—1927 թթ. 20 ցուլ տրամադրեց գյուղատնտեսական կոոպերատիվներին կովերի բեղմնավորումը կազմակերպելու և նրանց որակը բարձրացնելու համար[10]։

Սովխոզների օգնությունը աստիճանաբար ուժեղանում է նրանց ցանցի լայնացման և տնտեսական զարգացման հետ միասին։

Սովխոզների տնտեսական զարգացումը ներկայացնում է հետևյալ պատկերը (միայն Գյուղատնտեսական տրեստի սովխոզները). եթե 1923 թ. համախառն արտադրանքի գումարը կազմում էր 54.200 ռ., ապա 1927 թ. այն հասավ ավելի քան 202 հազար ռուբլու, իսկ ռեսպուբլիկայի բոլոր սովխոզների համախառն արտադրանքը հասնում էր 300 հազար ռուբլու։ Պետական տնտեսությունների տեսակարար կշիռը ամբողջ գյուղատնտեսական արտադրանքի մեջ դեռևս շատ չնչին էր. նա հազիվ կազմում էր կես տոկոս[11]։

1925 թ. սովխոզներում աշխատել են միջին հաշվով 500—600 բանվորներ (մշտական և սեզոնային)։ Երեք տարվա ընթացքում (1924—1927 թթ.) մշտական բանվորների աշխատավարձը ավելացավ 50 տոկոսով։ Զգալի չափով բարձրացավ նաև սեզոնային աշխատողների աշխատավարձը։

Անհրաժեշտ է, սակայն, նկատի ունենալ, որ սովխոզների ճնշող մեծամասնությունը, քանի որ գտնվում էր ձևավորման և կազմակերպման շրջանում, դեռևս շահութաբեր չէր։ Չնայած դրան, Սովետական կառավարությունը ամեն կերպ օգնում էր նրանց ոտքի կանգնելու, տնտեսապես ամրապնդվելու, հաշվի առնելով այն դերը, որ ունեին սովխոզները գյուղատնտեսության վերակառուցման գործում։

Գյուղատնտեսության կոլեկտիվացմանը անցնելու մասին Կոմունիստական պարտիայի 15-րդ համագումարի (1927 թ. դեկտեմբեր) որոշումը վճռական դեր խաղաց սովխոզների ցանցի ընդլայնման և զարգացման գործում. բարձրացավ նրանց դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և խոշոր սոցիալիստական տնտեսությունների առավելությունները ցույց տալու բնագավառում։

Համատարած կոլեկտիվացման նախապատրաստման տարիներին Հայաստանում էլ կազմակերպվեցին մի շարք նոր սովխոզներ, որոնք եղածների հետ միասին զգալի աշխատանք տարան գյուղացիական տնտեսությունների շրջանում։

[9] Նույն տեղում, ֆ. 123, ց. 3, գ. 1792, թ. 284։
[10] Նույն տեղում, ռ. 1, գ. 1017, թ. 16-18։
[11] Նույն տեղում, թ. 3։

1928—1929 թթ. առաջին հնգամյա պլանի համաձայն կազմակերպվեցին Դիլիջանի—Սեմյոնովկայի և Յանրդի կալմնատանասնապահական ֆերմաները, որոնք բուծում էին խոշոր եղջերավոր անասուններ և «Բայրաս» ցեղի տեղական ոչխարներ։ Կազմակերպվեց Ալագյազի ֆերման, որի խնդիրն էր աճեցնել և բարելավել «Բայրաս» ոչխարների որակը, բարձրացնել նրանց մթերատվությունը։

1929 թ. դարձան իր գյուղատնտեսական աշխատանքներն սկսեց Լենինականի սովխոզը, որն զբաղվում էր հացահատիկի և շաքարի ճակնդեղի մշակությամբ։ Լենինականի շրջանում այդ ուղղությամբ կատարված փորձերը տվել էին լավ արդյունքներ։ Ոռոգման համար սովխոզն օգտագործում էր Շիրակի ջրանցքի ջուրը։ Հացահատիկային-անասնաբուծական սովխոզ կազմակերպվեց Ջոդում (Բասարգեչար)։

Այդ բոլոր նոր սովխոզները մտնում էին Գյուղատնտեսական տրեստի սիստեմի մեջ։ Նրանից դուրս այդ ժամանակ գոյություն ունեին մի քանի մանր պետական տնտեսություններ, տնկարաններ և այլն, որոնք իրենց գործունեությամբ առանձնապես մեծ դեր չէին խաղում։ 1928 թ. Գյուղատնտեսական տրեստից հանվեց Մյասնիկյանի անվան 2-րդ սովխոզը և հանձնվեց Հայաստանի Պետական համալսարանին՝ որպես փորձնական տնտեսություն։ Տրեստի իրավասությունից հանվեց նաև (1929 թ.) 1-ին սովխոզը, որը դարձավ Այդեղործական կայանի փորձադաշտը։

1929 թ. բնկման տարի էր նաև Հայաստանի սովխոզային շինարարության զարգացման բնագավառում։ Գյուղտրեստի այդ տարվա հաշվետվության մեջ կարդում ենք. «1929 թ. շրջադարձային տարի էր Հայաստանի սովխոզային շինարարության մեջ։ Մինչև հաշվետու տարին սովխոզների կազմակերպման վերցրած տեմպը չէր համապատասխանում գյուղատնտեսության վերակառուցման տեմպին։ Սովխոզները գյուղատնտեսության վերակառուցման բազան են, բայց նրանք կարող են դառնալ այդպիսին այն դեպքում, եթե կազմակերպվեն և հենվեն էներգետիկ ուժերի (տրակտորիզացիա, էլեկտրիֆիկացիա և այլն) մաքսիմալ օգտագործման վրա։ Հաշվետու տարվանից Գյուղտրեստը լայնորեն խնդիր է դրել հասնել նշված նպատակին, չնայած նյութական սուղ հնարավորություններին»[12]։

Ինչպես ցույց են տալիս փաստերը, 1929 թ. սկսած Հողժողկոմատը վճռական շրջադարձ է կատարում դեպի սովխոզների զարգացումը։

1928—1929 թթ. Գյուղտրեստի կապիտալ ներդրումների գումարը կազմել է 1.550 հազար ռուբլի, որից ավելի քան 1.250 հազար ռուբլին երկարատև բանկային վարկեր էին։ Դա հնարավորություն տվեց կազմակերպելու նոր խոշոր սովխոզներ, ձեռք բերելու տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ, ավելացնել վարելահողերի և այգիների տարածությունը, գնել անասուններ և այլն։ 1928 թ. սովխոզների համախառն արտադրանքը կազմեց 263 հազ. ռուբլի, իսկ 1929 թ.՝ 420 հազ. ռ. (յուրաքանչյուր տարվա գներով)[13]։

1929 թ. Հայաստանում, Գյուղտրեստի սիստեմում, կար ութ սովխոզ (այդեղործական, անասնաբուծական և դաշտավարական)։ Նրանց հատկացված հողատարածությունը հասնում էր մոտ 49.000 հեկտարի, որի մեծ մասը խոտ-

[12] Նույն տեղում, ֆ. 113, ց. 1, գ. 150, թ. 1։
[13] Նույն տեղում, թ. 6։

հարքներ և արոտավայրեր էին։ Վարելահողերի տարածությունը 8650 հեկտար էր. 1928 թ. 247 հեկտարի դիմաց։ 3-րդ սովխոզում տնկվեց մի քանի տասնյակ հեկտար խաղողի այգի. ստեղծվեց պտղաբուծական խոշոր տնկարան։ Զգալի չափով բարձրացավ սովխոզների տեխնիկական զինվածությունը։ Լենինականի նորաստեղծ սովխոզը 1929 թ. աշնանը ուներ 11 տրակտոր և կատարեց 600 հեկտար աշնանացան՝ «ուկրաինկա» տեսակավոր սերմով։ Նույն թվականին բոլոր սովխոզները միասին ունեին 24 տրակտոր, 1928 թ. հնգի դիմաց, 45 շարքացան. նախորդ տարվա 9-ի դիմաց, երեք կալսիչ և այլն։ Ամբողջ Լենինականի գավառում կալսիչ մեքենան առաջին անգամ աշխատեց Լենինականի սովխոզում։

Նյութական բազայի ընդլայնումը հնարավոր դարձրեց մեծացնելու սովխոզների ագրոկուլտուրական գործունեությունը, գյուղացիների մեջ նրանց կողմից տարվող աշխատանքը։

Գյուղացիներին ցույց տրվող օգնության գործում սկսում է կարևոր տեղ գրավել տրակտորը։ Լենինականի, 3-րդ և մյուս սովխոզները օգնում էին չքավոր գյուղացիներին՝ արագ վարելու հողակտորները և շուտ կատարելու ցանքը։ Եթե մինչև 1928 թ. այդպիսի օգնություն հնարավոր չէր կազմակերպել, ապա այժմ տրակտորով վարի տարածությունը կազմեց 60, իսկ 1929 թ. 400 հեկտար։

Վերջին տարում անասնաբուծական սովխոզներում կազմակերպվեց երեք ընդլայնման կայան։ Երկու տարվա ընթացքում գյուղացիական տնտեսություններին բաց է թողնվել 57 ցուլ, 90 ցեղական խոզ, ավելի քան 300 փութ գանազան տեսակավոր սերմեր, կալսվել է 85 տոննա հացահատիկ, զտվել է 80 տոննա սերմ և այլն։ Միայն 1929 թ. բաժանվել է 40 հազար գանազան տնկիներ, խաղողի 51 հազար մատ[14]։

Որոշ սովխոզներում կազմակերպվել էին մեքենայական վարձութակետեր, որոնք նպաստավոր պայմաններով և առաջին հերթին օգնում էին չքավոր գյուղացիներին, նրանց տրամադրելով գութաններ, լծկաններ և այլն։

Սեմյոնովկայի, Յանրդի և Լոռու անասնաբուծական սովխոզներում գոյություն ունեին երեք տեխնիկապես կահավորված պանրագործարաններ, որոնք չվեյցարական և այլ ընտիր պանիրների համար վերամշակում էին ոչ միայն իրենց, այլև գյուղացիների կովերի կաթը, դրանով չքավոր գյուղացիներին ազատելով կուլակների շահագործման հնարավորությունից։

Սովխոզների վերափոխիչ դերը միայն նրանց օգնությամբ կամ ագրոկուլտուրական աշխատանքներով չէր սահմանափակվում։ Հարկավոր է նկատի ունենալ նաև, որ սովխոզների աշխատողների ճնշող մեծամասնությունը դեռևս մշտական բանվորներ չէին։ Այնտեղ հիմնականում աշխատում էին մոտակա գյուղերի գյուղացիները. մասնավորապես սեզոնային աշխատանքների ժամանակ։ Անձամբ մասնակցելով կոլեկտիվ, կազմակերպված աշխատանքին, նրանք մի կողմից ընտելանում էին դրան, մյուս կողմից ականատես լինում կուլտուրական տնտեսության նվաճումներին։ Նրանց վրա հատկապես մեծ ազդեցություն էին գործում տրակտորները, որոնք հեշտացնում էին աշխատանքը, և գյուղացիներին ազատում ծանր հոգսից։ Ահա ինչ է գրել թղթակիցը Լենինականի սովխոզից. «Գարնան ցանքաղաշտի կենտրոնում երկու հսկայական

[14] Նույն տեղում, ֆ. 113. ց. 1, գ. 150. թ. 1—7, և ֆ. 112, ց. 1. գ. 144, թ. 22։

կալսող մեքենաներն աղմուկով աշխատում են տրակտորների շարժիչ ուժով և իրենց արդյունքով թե հիացնում և թե զարմացնում են աշխատող գյուղացիբանվորներին»[15]։

Հայաստանի սովխոզային շինարարության նվաճումները ամփոփվեցին 1929 թ. սեպտեմբերին ՀՍԽՀ Ժողկոմխորհի Տնտեսական խորհրդակցության կողմից։ Նշվեց, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովխոզների տեխնիկական զինվածությանը, առաջին հերթին տրակտորային պարկի ընդլայնմանը։ Տնտեսական խորհրդակցությունը հանձնարարեց Հողժողկոմատին և Գյուղտրեստին՝ կազմակերպել նոր սովխոզներ, ուժեղացնել պայքարը դեկավար կադրերի հոսունության դեմ, սովխոզները ապահովել որակյալ մասնագետներով և բարելավել բանվորների նյութական և բնակարանային պայմանները։ Սովխոզային շինարարության զարգացման և նրանց ամրապնդման նպատակով հատկացվեց 2,5 միլիոն ռուբլի[16]։

1929—1930 թթ. սովետական գյուղը մտավ զարգացման նոր շրջան։ Արմատական բեկում կատարվեց չքավոր և միջակ գյուղացիների մեջ՝ դեպի կոլեկտիվ տնտեսությունները։ Սկսվեց համատարած կոլեկտիվացումը՝ կուլակության որպես դասակարգի լիկվիդացման հիման վրա։ Նոր էտապ սկսվեց նաև սովխոզների զարգացման համար։ Նոր պայմանների համեմատ փոխվեց նրանց դերը և նշանակությունը։ Եթե մինչև այդ սովխոզները, օրինակելի սոցիալիստական ձեռնարկություններ լինելով հանդերձ, պարտավոր էին օժանդակել գյուղացիական տնտեսություններին, ապա այժմ, շարունակելով մնալ որպես օրինակելի պետական տնտեսություններ, նրանք պետք է օգնեին համատարած կոլեկտիվացման իրականացմանը։ Կոմունիստական պարտիայի XVI համագումարը (1930 թ. հունիս) իր որոշումներում գրում էր այն մասին, որ երկրի ոչ հացահատիկային շրջաններում, արևելյան ռեսպուբլիկաներում և մարզերում մասսայական կոլտնտեսային շարժումը նախապատրաստելու աշխատանքներից մեկն էլ սովխոզների կազմակերպումն է[17]։

Նոր պայմանների և հիշյալ որոշման կապակցությամբ սովխոզային շինարարության բնագավառում կատարվեցին մի շարք փոփոխություններ։

Ինչպես ասել ենք, Հայաստանի սովխոզների մեծ մասը կենտրոնացած էր Հողժողկոմատի Գյուղատնտեսական տրեստում։ 1930 թ. տրեստը լիկվիդացվեց։ Ռեսպուբլիկայի այգեգործական սովխոզները հատկացվեցին գինեգործական «Արարատ» տրեստին՝ խաղողի հումքային բազան ամրապնդելու նպատակով, իսկ տրեստը մտավ Հողժողկոմատի սիստեմի մեջ։ Անասնարուծական սովխոզները հանձնվեցին միութենական համապատասխան տրեստներին («Սկոտովոդ», «Օվցեվոդ», «Սվինովոդ»)։

Արագորեն կազմակերպվում են պետական նոր տնտեսություններ, ավելանում են կապիտալ ներդրումները և բարձրանում է մեխանիզացիայի մակարդակը։

Միայն 1930—1931 թթ. կազմակերպվեցին Կիրովականի Շահումյանի անվան պտղաբուծական, Հոկտեմբերյանի բամբակագործական, Աղբարայի անասնաբուծական և այլ սովխոզներ։ Հոկտեմբերյանի սովխոզը, որը օգտա-

[15] «Խորհրդային Հայաստան», 11 հոկտեմբերի, 1929։

[16] Նույն տեղում, 22 սեպտեմբերի, 1929։

[17] Տե՛ս ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում, 3-րդ մաս, Հայպետհրատ, 1955, էջ 68—69։

գործում էր Փոքր Սարգարարատի ջրանցքով ոռոգվող հողերը, ընդարձակվելով հետագայում բաժանվեց մի քանի ինքնուրույն սովխոզների։

1930 թ. Հոկտեմբերյանում կազմակերպվեց ռեսպուբլիկայի առաջին մեքենա-տրակտորային կայանը, որը սպասարկում էր բազմաթիվ կոլտնտեսությունների, սովխոզների և մենատնտես գյուղացիների։

Որոշ սովխոզներ արդեն հնարավորություն ունեին կոլտնտեսություններին ավելի շատ օգնելու։

Երրորդ սովխոզը, որը ուներ հզոր տրակտորային բրիգադա, ոչ միայն իր սեփական հերկն էր կատարում, այլև օգնում էր մի շարք կոլտնտեսությունների։ Կոլեկտիվացման առաջին գարնանը սովխոզի տրակտորիստները Վերին Խաթունարխի, Զորանքարայի, Ներքին Քյոլանլուի, Ղարսուղլաղի, Վարմազիարի, Փարաքարի և մի քանի այլ կոլտնտեսություններում կատարեցին բամբակի և հացահատիկի հարյուրավոր հեկտար վար։

Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման տարիներին սովխոզների գործունեությունը դառնում է ավելի հարուստ և բազմակողմանի։ Պատմական այդ ժամանակաշրջանում սովխոզների գործունեության պարզաբանումը առանձին ուսումնասիրության նյութ է։

Այսպիսով, Հայաստանի սովխոզները, որոնց կազմակերպումը սկսվել է Սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո, իրենց հնարավորությունների սահմաններում ձգտել են լինել օրինակելի, կապվել իրենց շրջապատող աշխատավոր գյուղացիության հետ, օգնել նրան, նախապատրաստել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Դա նշանակում է, որ նրանք կատարում էին այն խնդիրները, որոնք սովխոզների առաջ դրել էին Վ. Ի. Լենինը, Կոմունիստական պարտիան։

* * *

Համատարած կոլեկտիվացման հաղթանակին զուգընթաց, որի մեջ սովետական տնտեսությունները զգալի դեր խաղացին, ստեղծվեցին բազմաթիվ նոր սովխոզներ, ավելացավ նրանց ցանքատարածությունների, խաղողի և պտղատու այգիների տարածությունը, խոշոր եղջերավոր անասունների և ոչխարների գլխաքանակը։

Այդ տարիներին կազմակերպվեցին մի քանի տասնյակ տնտեսություններ, որոնք այնուհետև խոշորացվեցին և Հայրենական պատերազմի նախօրյակին նրանց թիվը հասավ 14-ի։ Լոռու «Ռեսանարածական, 3-րդ, 4-րդ, Թաիրովի անվան, Կիրովի անվան, Հոկտեմբերյանի և մյուս սովխոզները ձեռք բերեցին արտադրական զգալի հաջողություններ, իսկ նրանց մի մասը մասնակցեց Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտումից հետո արագ տեմպով ծավալվեց սովխոզային շինարարությունը։ Հանդես եկան 9-րդ (Էջմիածնի շրջան), Ստալինի անվան, «Արարատ», Շահումյանի անվան (Հոկտեմբերյանի շրջան), «Զեյթուն», Թումանյանի անվան (Նոյեմբերյանի շրջան) և բազմաթիվ այլ սովխոզներ։

Սովխոզների, ինչպես և ամբողջ սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար նոր էտապ բացեց Կոմունիստական պարտիայի Սեպտեմբերյան պլենումը (1953 թ.)։

1953 թ. համեմատությամբ, այժմ ռեսպուբլիկայի սովխոզների թիվը կրկնապատկվել է և անցնում է 80-ից, մոտ 400 հազար հեկտար հողատարածությամբ։ Դրանց մի մասը կազմակերպվել է կոլտնտեսությունների բազայի վրա։ Այգեգործական սովխոզները կենտրոնացած էին Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի սովխոզների տրեստում, իսկ անասնապահական սովխոզները՝ Գյուղատնտեսության մինիստրությունում։ Հիմնական արտադրության մեջ զբաղված աշխատողների միջին տարեկան թիվը 1940 թ. 2,5 հազարի և 1953 թ. 7,5 հազարի դիմաց 1959 թ. հասավ 25,8 հազարի։ Ամբողջ գյուղատնտեսության մեջ եղած 3867 բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող մասնագետներից 1248-ը աշխատում են սովխոզներում և մյուս պետական տնտեսություններում։ Սովխոզներն ապահովված են ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայով։ Վերջինս ավելի ու ավելի է ընդգրկում գյուղատնտեսության դեռևս չմեքենայացված գործողությունները։ Էլեկտրիֆիկացված է ռեսպուբլիկայի սովխոզների 96 տոկոսը, 1950 թ. 63 տոկոսի դիմաց։

Սովխոզներում 1960 թ. հունվարի 1-ին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասավ 47,8 հազարի կամ 1954 թ. համեմատությամբ ավելացավ ավելի քան 12 անգամ, նույն ժամանակամիջոցում կովերի գլխաքանակը ավելացավ ավելի քան տասն անգամ՝ 15 հազարից հասնելով 15,2 հազարի։ 1959 թ. սովխոզների և մյուս պետական տնտեսությունների խազոդի և պտղատու այգիների տարածությունը կազմում էր 13 հազար հեկտար, 1937 թ. 4,3 հազար հեկտարի դիմաց[18]։

Ռեսպուբլիկայի սովխոզների աշխատավորները կոլտնտեսային գյուղացիության հետ միասին պայքարում են գյուղատնտեսական մթերքների առատություն ստեղծելու, մեկ շնչին ընկնող մթերքների արտադրությամբ ԱՄՆ-ին հասնելու և անցնելու համար։

Գյուղատնտեսության յոթնամյա պլանի խնդիրները կատարելու համար սովխոզային և կոլտնտեսային աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու գործում մեծ դեր կխաղան ՍՄԿՊ 1961 թ. հունվարյան պլենումը, պլենումում և նրանից հետո կայացած խորհրդակցություններում Ն. Ս. Խրուշչովի ունեցած ելույթները։

Պարտիայի հունվարյան պլենումը սովետական ժողովրդին և գյուղատնտեսության բոլոր աշխատողներին զինեց գյուղատնտեսության հետագա վերելքի, բնակչության համար սննդամթերքների և արդյունաբերության համար հումքի առատություն ստեղծելու ծավալուն ծրագրով։ 1961 թ. փետրվարին Թբիլիսիում կայացած Անդրկովկասի գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցությունը բնարկեց Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կոլտնտեսային և սովխոզային աշխատավորների խնդիրները պարտիայի ծրագիրն իրականացնելու բնագավառում։ Խորհրդակցությունում Ն. Ս. Խրուշչովը նշեց, որ «Յուրաքանչյուր ռեսպուբլիկա պետք է իր ավանդը մուծի մթերքների արտադրության անընդհատ ավելացման գործում»[19]։

Վերանայելով իրենց հնարավորությունները, ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները և սովխոզները ստանձնեցին կոնկրետ պարտավորություններ՝ յոթ-

[18] Տվյալները վերցրել ենք «Советская Армения за 40 лет» փաստագրական ժողովածուից։

[19] «Սովետական Հայաստան», 12 փետրվարի, 1961։

նամյակի երրորդ տարում բարձր բերք ստանալու և անասնաբուծական մթերքների արտադրությունը ավելացնելու համար։

Կոմունիստական պարտիայի մշակած ծրագրի իրականացումը ապահովելու նպատակով վերակազմվել է Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրությունը։ Կենսագործվում են նաև մ շարք այլ միջոցառումներ։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1961 թ. մարտի 4-ի հրամանագրով կազմվել է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Սովխոզների գլխավոր վարչությունը։ Այդ միջոցառումները կօգնեն սովխոզային աշխատավորներին՝ կատարելու Ռեսպուբլիկայի պարտավորությունները։

Ռեսպուբլիկայի առաջին սովխոզների կազմակերպումից անցել է 40 տարի։ Չորս տասնամյակի ընթացքում նրանք դարձել են բարձր մեքենայացված, շահութաբեր, ապրանքային արտադրության խոշոր կենտրոններ։ Նրանց կողքին հանդես են եկել տասնյակ այլ սովխոզներ, որոնք զգալի տեղ են գրավում Հայաստանի գյուղատնտեսական արտադրության մեջ։ Կոլտնտեսությունների հետ միասին մեր ռեսպուբլիկայի սովխոզները թևակոխում են զարգացման նոր ժամանակաշրջան։